ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

21-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ՝ ԱՐՏԱՀԵՐԹ 7-ՐԴ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 (ութ)

անդամներ:

Բացակա էին՝ [illegible]

**Համայնքի ղեկավարի** 1-ին տեղակալ **իրավերով**
**ավագանու նիստին մասնակցում էին՝** [illegible]

**Նիստը վարում էր** [illegible] 1-ին տեղակալ [illegible]

**Նիստը արձանագրում էր** [illegible]

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ 7-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է**

1.Հաստատել 21-ը դեկտեմբերի 2025թ. արտահերթ յոթերորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին,

3.Եղեգիս համայնքի 2026թ. տարեկան բյուջեի նախագծի քննարկման մասին,

4.Եղեգիս համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին,

5.2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

6.2026 թվականի համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

7.2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանելու մասին,

8.2026 թվականի ընթացքում Եղեգիս համայնքի տարածքում աղբահանությունը օպերատորի կողմից իրականացնելու մասին,

9.Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022 թվականի թիվ 134Ա և 08/12/2022 թվականի թիվ 137Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին,

10.Եղեգիս համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման մասին,

11.Եղեգիս համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը հաստատելու մասին,

12.Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության հողատեսքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին,

13.«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի հետ համագործակցելուն համաձայնություն տալու մասին,

14.Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,85535 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

15.Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 8.04455 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

16.Հոռբատեղ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

17.Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,04378 հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

18.Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,47851հա այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

19.Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,3983հա վարելահող հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

19 20.Եղեգիս համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

20 21.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

19-րդ կետը առաջարկվեց հանել օրակարգից

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի և 10-րդ հոդվածի դրույթներով

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է***

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118 Ն/

LՍԵՑԻՆ

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է***

Հաստատել Եղեգիս համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի նախագիծը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119 Ա/

LՍԵՑԻՆ

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2026 թվականի փետրվարի 27 -ին, ժամը 15:00 -ին:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120 Ա/

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 28-րդ կետերի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

1.Հաստատել 2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

2.Հաստատել 2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 69 (վաթսունինը):

առաջարկեց՝ [illegible] դրույքաչափը 0,6-ից [illegible] 0,8 և [illegible] դրույքաչափը [illegible] 30000 ՀՀ (երեսուն հազար) դրամ:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ- 1

Ա. Դանիելյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121 Ա/

ԼՍԵՑԻՆ

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ «ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով,

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է*

1.Հաստատել 2026թ. համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

2.Հաստատել 2026թ. համար «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 17 (տասնյոթ):

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122 Ա /

ԼՍԵՑԻՆ

**2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է*

2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123 Ա /

<u>ԼՍԵՑԻՆ</u>

**2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով

***Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է***

1.2026 թվականի ընթացքում Եղեգիս համայնքի տարածքում աղբահանությունը իրականացնել համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորի կողմից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված օպերատորի հետ պայմանագրի կնքման և ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124 Ա/

<u>ԼՍԵՑԻՆ</u>

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08/12/2022 Թ. ԹԻՎ 134Ա ԵՎ 08/12/2022 Թ. ԹԻՎ 137Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին և 3)-րդ կետերի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 134Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Եղեգիս համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գաբրիելյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

արձանագրող՝ Է. Ղարիբյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի Ժ/Պ

անդամներ՝ Ռ. Ոսկանյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Ա. Սիմոնյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Հ. Պողոսյան -համայնքի ավագանու անդամ

2.Մրցութային գործընթացում սակարկություններն իրականացնող (աճուրդավար) նշանակել Ա. Սիմոնյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:»:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 137Ա որոշման հավելվածում «Արտաշ Արտաշյան» բառերը փոխարինել «Էլիզա Ղարիբյան» բառերով:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 125 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողությունը ընդունել ի գիտություն:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Եղեգիս համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Գ. Մարգարյանը չի մասնակցել քվեարկությանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը ապրիլի 2021 թվականի թիվ 698-Ն որոշման 31-րդ կետի 7-րդ ենթակետը, 39-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 22/05/2025թ. N՝ Կ-22052025-10-0128 որոշումը՝ գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող սխալմամբ «քաղաքացիների սեփականություն» փոխանցված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-041-0004-0026, մակերեսը՝ 0,08918 հա) ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128 Ա/

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

**«ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի հետ համագործակցելուն, ըստ որի.

«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի կողմից համայնքում կառուցվի 150ԿՎտ հզորությամբ նոր արևային կայան՝ համայնքի կարիքների համար:

Հիմնադրամի գործող և ապագայում ավելացող անհատույց օգտագործման հողատարածքների անշարժ գույքի հարկը և վարձավճարները համայնքը հաշվանցի արևային կայանից ստացվող եկամուտներից:

Նախկինում հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտքերը և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի մի մասը արտոնվեն՝ չգերազանցելով 2025թ. հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների տասը տոկոսը, իսկ գոյացած անշարժ գույքի հարկի և դրա նկատմամբ հաշվարկված տույժերի մնացած մասը ՝ ամբողջությամբ, համայնքը հաշվանցի արևային կայանից ստացվող եկամուտներից:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,85535ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր՝ 10-021-0114-0163, մակերեսը՝ 0,85535հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել 3 240 000 (երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 0 Դեմ- 8 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 8,04455 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

կադաստրային ծածկագիր՝ 10-044-0204-0094, մակերեսը՝ 8,04455հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի ———— տոկոսի չափով:
50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ՀՈՐԲԱՏԵՂ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հորբատեղ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված վարելահող հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր՝ 10-030-0106-0025, մակերեսը՝ 0,39738հա,
2)կադաստրային ծածկագիր՝ 10-030-0106-0029, մակերեսը՝ 0,19592հա,
3)կադաստրային ծածկագիր՝ 10-030-0106-0030, մակերեսը՝ 0,08837հա,
4)կադաստրային ծածկագիր՝ 10-030-0106-0021, մակերեսը՝ 0,22732հա,
5)կադաստրային ծածկագիր՝ 10-030-0106-0032, մակերեսը՝ 0,10015հա:

2.Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 200 (երկու հարյուր) տոկոսի չափով:
3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 132 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,04378ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.04378հա այլ հողեր հողատեսքն (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001-0150) աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել 920 000 (ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 133 Ա/

ԼՍԵՑԻՆ

**ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,47851 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-044-0027-0054, մակերեսը՝ 0,47851 հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի (ութ հարյուր ութ) տոկոսը (1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ):

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 134 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,3983 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0205-0011, մակերեսը՝ 0,3983 հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել 1050000 (մեկ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ):

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- Դեմ- Ձեռնպահ-

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 135 Ա/

**ԼՍԵՑԻՆ**

**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի և 3-րդ մասի պահանջներով

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 21-ի «Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 40Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «տասը տարի ժամկետով» բառերով,

բ)«բացառապես ծառատունկ իրականացնելու նպատակով» բառերը փոխարինել «ծառատունկի, կեսաբազմազանության պահպանության, որսագողության կանխարգելման և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու նպատակով» բառերով,

գ)կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 21-ի «Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 41Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «տասը տարի ժամկետով» բառերով,

բ)«բացառապես ծառատունկ իրականացնելու նպատակով» բառերը փոխարինել «ծառատունկի, կեսաբազմազանության պահպանության, որսագողության կանխարգելման և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու նպատակով» բառերով,

գ)կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

3.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 21-ի «Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 42Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «տասը տարի ժամկետով» բառերով,

բ)«բացառապես ծառատունկ իրականացնելու նպատակով» բառերը փոխարինել «ծառատունկի, կեսաբազմազանության պահպանության, որսագողության կանխարգելման և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու նպատակով» բառերով,

գ)կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N ~~136~~ 135 Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Սարգսյան Տիգրան

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

Նիստն արձանագրեց՝